

հարկադրուած էր...: Արգոյ հասարակութիւնն համոզուեցաւ, թէ շահա-
խնդրութիւնն էր եւ է անմիաբանութեան պատճառն, եւ միաբանութիւնն
այն ատեն իւր դրօշը պիտի պարզէ, երբ գործադիր ժողովոյ իւրաքանչիւր
անդամն ընկերութենէն շահ մը հանէ իւր անձին համար, եւ աս ալ
հաւանական չէ առ այժմ:

Արդ՝ ցաւելով կծանուցանենք, թէ Միացեալ Ընկերութիւնն իւր
համակրութիւնը կորուսած է. գայն գտնողին եւ տիրոջը դարձնողին մեծ
վարձատրութիւն խոստացուած է հոս:

16 Յուլիս

Թէրճէմանը հաքիքաթ այս օրերս, ինչպէս կ'ըսէ ռամիկն, ածուխ է
կերած եւ հուր կ'ծայթէ բերնէն:

Ի՞նչ իրաւունքով, կ'ըսէ այս լրագիրն, Աւստրիոյ կառավարութիւնն
թերթիս Պօսնա եւ Հէրսէք մտնելը կ'արգելու... միթէ այս քաղաքները
օսմանեան բարեխնամ կառավարութեան չե՞ն:

Չգիտենք թէ այս հարցումն որո՞ւ կ'ուղղէ. եթէ ինձի ուղղած ըլլար՝ ես
հետեւեալ պատասխանը կու տայի.

«Բարեկամ, Աւստրիոյ կառավարութիւնն քանի որ առժամանակեայ
կերպով տէր եղած է այդ քաղաքներուն՝ առժամանակեայ կերպով
կ'արգելու քու թերթիդ հոն մտնելը: Սա ալ մոռնալու չէ, որ
քաղաքագիտութեան մէջ *առժամանակեայն մշտնջենաւոր կը* նշանակէ»:

**

Օրէնքը մեծ խստութեամբ կգործադրուի Պարսկաստանի մէջ:

Յիշեալ կառավարութեան ներքին գործերու պաշտօնեայն՝ որոշուած
գնէն բարձր գնով ուտելիք ծախողներուն ականջը կտրած է: Ականջը
խօսի՝:

Այս պատիժն հոս ալ կարելի էր գործադրել՝ եթէ ծախողները
հարիրական ականջ ունենային: Եթէ այսպէս լինէր՝ օրն անոնց
իւրաքանչիւրէն տասնական ականջ կկտրէինք, տասն օրուան մէջ կարող
կլինէինք թերեւս զանոնք ուղղութեան հրաւիրել: Մեր ծախողներն միշտ
այնչափ բարձր գիներով կծախեն, որ այդ հաշուով իրենց երկու ականջը
կէս ժամուան մէջ կկորուսին, վերջը ի՞նչ պատիժ տալու է:

Բայց նախ եւ առաջ քաղաքապետութեան ականջը կտրելու է, որ
ժողովրդեան սովորականէն վեր գնով հաց գնել կու տայ: